

## ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ «ՕԶԱԽԻ» ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՅԻՄՔԸ ԵՎ ԱՂԵՐՍՆԵՐԸ ԱՐՑԱԽԻՑԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ\*

### ՄԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՅ ԳԱԱ գրականության ինստիտուտի հայցորդ

Զորի Բալայանը՝ որպես մտածող, գրող և քաղաքացի, արտակարգ երևոյթ է մեր իրականության մեջ: Նա իր եռանդուն գործունեությամբ ճանապարհ է հարթում հայ հասարակական մտքի հետագա առաջընթացի համար: Այդ իսկ պատճառով Զորի Բալայանի ստեղծագործության համակողմանի քննությունը ենթադրում է գրական ընդհանուր օրինաչափությունների և հրապարակախոսի ապրած ժամանակաշրջանի լայն ճանաչողություն, նրանց փոխառնչությունների, փոխայմանավորվածության խոր իմացություն, ինչն էլ անհրաժեշտություն է առաջացնում ընդհանուր հայացք նետելու այդ ժամանակին և հասարակական-քաղաքական այն իրավիճակին, որում և որով ապրել ու ապրում է հեղինակը, որով պայմանավորված են նրա և ստեղծագործությունները, և հարցադրումները, հրապարակախոսության ելակետերն ու չափանիշները:

Զորի Բալայանն իր հրապարակախոսությամբ տարբեր առիթներով հաճախակի է շեշտադրել իրականության հրատապ խնդիրների քննությունը: 1960-ական թվականներից ի վեր, երբ նա սկսել էր աշխատակցել համընդիանուր ճանաչում ունեցող «Լիտերատուրնայա գաղետա» թերթին, հրապարակախոսն անդրադարձել է թմրանմոլության, հարբեցողության ու դրա հետևանքների, արտագնա աշխատանքի, ինչպես նաև էկոլոգիայի խնդիրներին, գրել բազմաթիվ հոդվածներ, որոնք տպագրվել են միութենական տարբեր թերթերում և ամսագրերում, ունեցել բազմաթիվ արձագանքներ:

1981-ին լուս տեսավ «Օջախ» գիրքը, որը մեծ հոչակ բերեց գրողին: Այս էսեում, որը նվիրված էր Դայաստանի պատմությանը, հատկապես շեշտվում էր Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հայկական պատկանելությունը: Գիրքն ամփոփում էր Խորհրդային Դայաստանում, Նախիջևանում կատարած հնգամնյա ճանապարհորդության ուղեգրական նորերը: Այս գրքի համար որպես բնարան գրողն ընտրել է բանաստեղծ Ավետիք Խսահակյանի ասույթը: «Անեն բան անցնում է իմ սրտի միջով, ես անտարբեր չեմ կարող կանգնել աշխարհի առաջ»: Ինչպես հայտնի է, գրքի բնարանը հուշում է գրքի գաղափարի մասին: Տվյալ դեպքում՝ հեղինակի սրտի միջով անցնող «ամեն բանը» իր ժողովուրդն ու հայրենիքն են, նրա խնդիրները:

Այդ դժվարին ճամփորդության համար իր հետ որպես հավատարիմ ուղեկից հեղինակը վերցնում է միայն ճշմարտությունը: «Իսկ որպես մշտական ուղեկից ուզում եմ հետու վերցնել միայն ճշմարտությունը և ճանապարհը»: [1] ճշմարտությունը ևս յուրատեսակ ճանապարհ է: «...ճանապարհները ոչ միայն դժվարու-

\* Յողվածն ընդունվել է 25.01.2013.

Յողվածը տպագրության է երաշխավորել ՀՅ ԳԱԱ գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժինը:

թյուն են և նույնիսկ տառապանք, այլև՝ պատկերներ, կենդանի կտավներ, որպիսիք և ոչ մի բանգարանում չես տեսնի»: [2]

Նենց գրքի սկզբում արդեն նկատելի են գրողի դիրքորոշումն ու գեղագիտական սկզբունքները. «Գեղարվեստական գործը չի ստեղծվում առանց հնարանքի, բայց չի ստեղծվում նաև առանց կյանքի ծշմարտության»: [3]

Ըստ ժամանի՝ «դա գեղարվեստական իրապարակախոսություն է, որ համատեղում է բնաշխարհի նկարագրությունը, պատմական հուշագրությունն ու երկրի սոցիալ-հասարակական կառուցվածքի վիճակագրությունը»:[4] Ակադեմիկոս Սերգեյ Սարիկիմյանն իրավամբ «Օջախն» անվանումն է «հայրենագիտական մատյան»: Ցանկանալով ճանաչել հայրենի երկիրը «թիգ առ թիգ»՝ նա ճանապարհ է ընկնում: Մինչ այդ՝ Դարաբաղից մեկնելուց առաջ, իր Մարկոս պապի խորհրդով նա շրջել էր հայրենի բնաշխարհի բոլոր բնակավայրերը: Յարագատ երկրամասը, որի ճամաչողությունը մինչ այդ նրան հայտնի էր իր ծննդավայր Ստեփիանակերտով ու նրա շրջակայրով, իսկական բացահայտում է դառնում ապագա գրողի համար:

Արշավը սկսվում է 1978 թվականին և անվանվում «Վերածնունդ», որը բոլորովին պատահականորեն չէր ընտրված: Այն նվիրվում էր Արևելյան Յայաստանի՝ Ռուսաստանին միանալու 150-ամյակին, որով սկիզբ էր դրվել երկու ժողովուրդների՝ հայերի և ռուսների դարավոր բարեկամությանը: Գովաբանելով, երբեմն նույնիսկ գերազահատելով 1828 թվականի հայտնի հրադարձությունը՝ Զորի Բալայանն այս իրադարձության հետ է կապում հայ ժողովրդի փրկությունը: Սակայն անկասկած է «խորհրդային հրաշքով» ոտքի կանգնած հայ ժողովրդի վերածնունդը: Բայց հեղինակն իրական վերածնունդը չի պայմանավորում սույն ոռու ժողովրդի օգնությամբ: Այդ վերածննդի «պատճառներից» մեկն էլ հայ ժողովրդի՝ հարատևելու կամքի նկատմամբ մեծ հավատն է: Ներինակը, ի դեմս Պոյախինների ընտանիքի և Էջմիածնում տեսած հայուհու, զուգահեռաբար նկարագրում է իր ժողովրդի անցած ուղին ու կանխատեսում նրա ապագան: «Օջախը» սկսելով Ալեքսեյ Պոյախինին և նրա հայուհի կնոջ Աշխեն Սամսոնովնայի ողբերգության պատմությամբ՝ հեղինակը հիացմունքով է գրում կյանքի նկատմամբ այդ մարդկանց հավատի մասին: Պոյախինների ընտանիքի ճակատագիրը զարմանալիորեն նման է հայ ժողովրդի ճակատագրին. վերապրելով ողբերգությունը, կորցնելով իրենց զավակներից մեկին՝ նրանք չեն հանձնվում բնության տարերքին՝ ելք փնտրելով գրեթե ամելանելի իրավիճակից՝ մյուս երեխաններին փրկելու համար: Սա «Օջախի» հիմնական գաղափարներից է՝ հայ ժողովրդի աննկուն հավատը կյանքի նկատմամբ, որն էլ կանխորոշում է նրա վերածնունդը: Իսկ ահա ապագան արդեն այլ է, ապագան կյանքն է՝ մի գեղեցիկ հայուհի, որը, իմանալով իր անբուժելի հիվանդության մասին, չի հանձնվում մահկան ճիրաններին՝ այրակես փրկելով և իրեն, և իր երեխաններին. «Եվ նայելով երջանիկ մորը, որը փրկեց իր զավակներին ու ինքն էլ փրկվեց նրանց շնորհիկ, ես մտածում էի՝ հենց սա է իմ ժողովրդի եռթյունը, ազգային կերպարը»:[5] Գիրքը լի է Յայաստանի, հայ ժողովրդի ապագայի համեմայլավատեսությամբ:

Արշավի մեկնարկը տրվեց Մեղրիից, ուր հեղինակը հասել էր Նախիջևանով: Նենց այստեղ Զորի Բալայանը ականատեսի աչքերով է համոզվում, որ Նա-

խիջևանի նորաստեղծ հայկական ինքնավար համրապետությունը «ժողովուրդ-ների հայր» Ստալինը համատարած վերածել էր սահմանապահ գոտու: Իսկ դա նշանակում էր, որ նույնիսկ Նախիջևանում ծնված հայերը իրավունք չունեին առանց անցագրի մեկնելու այնտեղ կամ գոնե այցելելու նախնիների շրիհներին: Նախիջևանով անցնելիս նա եղավ Զուղայում, Չնարերդում, Օրդուրադում, այցելեց հայկական գերեզմանոցները՝ ամենուր ականատես լինելով թուրքական վանդալիզմին:

Նախիջևանում առաջին հանգրվանն Ագուլիսն էր, որի անմխթար վիճակը ցնցում է նրան. «Եվ որքան էլ շտապում էի... չէի կարող սրբնթաց անցնել «Ուկե ծորի» մոտով, ինչպես հնում անվանել են նշանավոր Ագուլիսը: Մի քաղաք, որտեղ եղել է ուր հազար հայ տուն... Ագուլիսում միայն տարբեր արհեստանոցների թիվը հասնում էր հարյուր հիսունի: Յարուստ խանութներ, բազում դպրոցներ, առևտուրի ուսումնարաններ, դեղատներ, բաղնիքներ, շուկաներ, գրադարաններ, հյուրանոցներ: Տասներկու վաճք ու եկեղեցի, որոնցից ամեն մեկը կարող էր լինել համաշխարհային ճարտարապետության գլուխգործոց: Ամեն ինչ եղել է այս հեքիաթային քաղաքում: Եվ այստեղ եղել է նաև տասնյոթ աղբյուր:

Այսօր ոչինչ չի մնացել: Ավերված է ամեն ինչ: Բարբարոսները այստեղով անցել են՝ համայն մարդկությանը պատկանող կուլտուրական արժեքները ոչնչացնելու բազմադարյան փորձ կուտակած: Ու մնացել են միայն սառնորակ աղբյուրները:

Ես կանգնել էի... քաղաքի ստորոտում, և սրտից արյուն էր կաթում: Տասներկու ճարտարապետական գլուխգործոցները կանգուն են իրենց տեղերում, բայց և չկան: Ես գիտեի, որ այնտեղ, ամենավերևում, գտնվում է Սուլր Ստեփանոսի եկեղեցին, մի քիչ ներքև՝ Ս. Թովմաս Առաքյալի վանքը, հետո գալիս են Սուլր Միհնասն ու Սուլր Քրիստովակիորը: Անկարող են արիեն մտածել: Միայն գգում եմ, որ այսպես են ոչնչացվել, ինչպես գրում է «Լրաբերը», Փյունիկիան և Ասորեստանը: Նրանք չկան: Չեն մնացել նույնիսկ նրանց հետքերը: Ու սարսափեցի այն մտքից, որ նույնը կարող էր պատահել Վրևեյան Յայաստանի հետ, եթե չլիներ Շոկտեմբերը»: [6]

Ասելիքը «զգեստավորելու» նպատակով նա անընդհատ կարևորում է Շոկտեմբերյան հեղափոխության դերը հայ ժողովրդի վերածնության հարցում՝ քաջատեղյակ լինելով, որ հենց այդ նույն հեղափոխության առաջնորդները, մասնավորապես Ստալինի ցուցումով, Աղրբեջանին բռնակցեցին Դարաբաղն ու Նախիջևանը:

Սակայն պետք է ըմբռնումով մոտենալ խնդրին: Միայն տարիներ անց գրողը խնդրում է, որ ապագա սերունդը, կարդալով 60-70-80-ական թվականներին գրված գրքերը, փորձի ըմբռնումով վերաբերվել այդ ժամանակաշրջանում ստեղծագործած հեղինակներին. «Նախ հարկ կլինի մսովի ապրել նրանց ժամանակաշրջանում, հետո նոր փորձել քննադատորեն մոտենալ նրանց գործունեության ու քաղաքացիական դիրքորոշմանը»: [7]

Ամրող գրում կարմիր թելի նման անցնում է պամթյուրքիզմի և թուրքական բարբարոսության թեման: Պամթյուրքիզմը (հոմանիշը՝ պամթուրամիզմ) քաղաքական և մշակութային հոսանք է, որը տարածված է թուրքական ժողովուրդնե-

րով բնակեցված երկրներում: Այս տեսության հիմքում ընկած է այդ ժողովուրդների քաղաքական միավորնան անհրաժեշտությունը՝ եթեկական, մշակութային և լեզվական ընդհանրությունների հիման վրա: Զնավորվել է XIX դարի 2-րդ կեսին: Պանթրութիզմի գաղափարախոսությունն ավելի քան մեկտարյա պատմություն ունի և սերտորեն առնչվում է «Թուրան» հասկացության հետ: Պանթրութիզմը թուրքի ազգային գաղափարախոսությունն է, ազգային ծրագիրը, որն ընկած է Թուրքայի պետական քաղաքականության հիմքում: XX դարակարգին պանթրութիզմը նաև դարձել էր երիտթուրքերի ազգային քաղաքականության գաղափարական հիմքերից մեկը: Ինչպես ցույց տվեցին 1915 թվականի ողբերգական իրադարձությունները պանթրութիզմը ոչ միայն «տեսություն» էր, այլև «պրակտիկա» (Զորի Բալայան):

Դեռևս Պարաբաղյան շարժումից մեկ տասնամյակ առաջ գրողը ներփակ մի զգացողությամբ կանխատեսում էր պանթրութիզմի հրեշավոր հետևանքները՝ ջանալով ահանգանգել այդ մասին: Նրան անհանգուացնում է Յայաստանի ժողովագրական պատկերը. թուրք մոլլաների այցելություններն ու քարոզ-հորդորներն աննպատակ չեն: Նրանք մահմեդական յուրաքանչյուր ընտանիքից պահանջում էին տասից ոչ պակաս երեխա, և դա այն դեպքում, երբ հայկական ընտանիքներում երեք երեխայից ավել չեն ունենում: «Տիսուր է այնքանով, որ հազվադեպ է: Չեն ուզում շատ երեխա ունենալ: Գրեթե ամեն մի ընտանիք իր համար «առավելագույն չափ» է մշակել՝ միջին հաշվով երկու կամ լավագույն դեպքում՝ երեք երեխա: Սա շատ նուրբ հարց է: Բայց և շատ կարևոր: ... բնակչության մեր աճը ոչ այնքան բնական էր, որքան մեխանիկական»:[8] Գրողը մատնանշում է այն հանգամանքը, որը 1920-40-ական թվականներին հայրենիք էին վերադարձել տասնամյակ թվականի ողբերգական իրադարձությունից հետո աշխարհով մեկ սփոված հայության մի ստվար մասը՝ երկու հարյուր հազար հայ՝ այսպիսով ապահովելով բնակչության մեխանիկական աճը:

Արդարացված է գրողի տագնապը: Չէ՞ որ հայտնի ծշմարտություն է. հողը նրանն է, ով ապրում է նրա վրա և մշակում այն: Իսկ ազեղի բնակչության ծննդի-ության բարձր մակարդակը պիտի անհանգուացներ գրողին, որը կանխատեսում էր, թե մի քանի տասնամյակ անց ժողովագրական պատկերը բոլորովին էլ հայ բնակչության օգտին չի լինելու, և աչք փակել այդ հանգամանքի վրա՝ մշանակում է գիտակցված ընթանալ դեպի կործանում:

Գրքի հրատարակումից հետո ադրբեջանական մտավորականության ներկայացուցիչները, որոնց թվում էին Սարիր Ռուստամխանլին, Միրզա Իբրահիմովը, Իսա Գամբարը և ուրիշներ, հիմնավոր հակափաստարկներ բերելու փոխարեն (Եթե, իհարկե, որանք լինեն), անխնա վիրավորում են հեղինակին՝ կանգ չառնելով ոչ գումարների, ոչ էլ գրաքննության առաջ: Սեղադրանքներից հատկապես անհինն էին հետևյալները, որ Բալայանի այս գիրքը հակախրհրդային բնույթ ունի և ուղղված է ԽՍՀՄ հիմքերը քայլայելուն (Իսա Գամբար): Եվ դա այն դեպքում, երբ Զորի Բալայանը Յայաստանի վերածնունդը կապում է հենց Յոկտեմբերյան հեղափոխության հետ: Յայտնի ծշմարտություն է. եթե չեն կարողանում գրոհել մտքերի վրա, գրոհում են մտածողի վրա:

Ադրբեջանցիների բարձրացրած աղմուկից արդեն կարելի է ենթադրել, որ

գիրքը խորհրդային ժամանակների համար բավական ազատամիտ ստեղծագործություն էր: Սակայն խնդիրն այստեղ ավելի խորքային էր:

Դայաստանի և հայ ժողովրդի վերածնունդով, նրա ապագայի նկատմամբ անքարուց հավատով լեցուն գիրքը հակահայկական հիստերիա առաջացրեց ոչ միայն Աղրբեջանում: Այն «անհանգստացրել» էր նաև Թուրքիայի կառավարությանը: 1984 թվականի վերջին, երբ պաշտոնական այցով Թուրքիայում էր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Ն. Ա. Տիխոնովը, թուրքական զինվորական խունտայի պարագուխնները խորհրդային կառավարության դեկավարին բողոքեցին «Օջախ» գրքի ուժում: Այստեղ ուշագրավն այն է, որ այդ ժամանակ, երբ ուսերեն լույս տեսավ «Օջախը», արդեն տպագրված էին «Դայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (փաստաթղթերի ժողովածու. Մկրտիչ Ներսիսյանի խմբագրությամբ, լույս է տեսել 1966-ին, իսկ ռուսերեն, երկրորդ լրացված հրատարակությունը՝ 1982-ին) մենագրության երկու հրատարակությունները, որոնցում անկողմնակալ, սակայն գիտակից մարդու համար սահմուկեցուցիչ հազարավոր փաստաթղթեր կային: Կասկածի տեղիք է տալիս այն, որ թուրքերն իրենց բողոքը հայտնեցին հենց Զորի Բալայանի «Օջախ» գրքի կապակցությամբ: Չէ՞ որ եթե խնդիրը միայն թուրքերի ազգային արժանապատվությունը «վիրավորելու» հանգամանքը լիներ, ապա վերոհիշյալ փաստաթղթերի ժողովածուն ավելի արժանահիշատակ էր: Պատճառն այն էր, որ «Օջախում» հեղինակը «մատը դնում էր» պանթյուրքիզմի ծրագրում թուրքերի համար ամենացավուու՝ ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Սեղրիի հիմնախնդրի վրա:

Աղրբեջանի դեկավար Դեյղար Ալիևին և Թուրքիային նոտահոգում էր Սեղրիի վրայով անցնող ծանապարիը: Եվ այն ժամանակ, երբ Ալիևը կառուցում էր թուրքերի համար ռազմավարական մեծ նշանակություն ունեցող ծանապարի, լույս տեսավ մի գիրք, որտեղ Սեղրիի մասին գրված է: «Բայց եռկի շատերը չգիտեմ, որ օսմանյան ռեցիդիվիստները՝ թալեաթների ու էնվերների ժառանգները, մեր քարտեզին նայելիս անեծքներ են տեղում Սեղրիի հասցեին: Ժամանակակից նեռֆաշիզմի այդ պնակալեզները սովորական Սեղրիի շոջանը անվանում են «նզովյալ սեպ», որ խրպել է իրենց աչքը»:[9]

Դեռ ժամանակին Ռաֆֆին ահանգանգում էր սպասվող ազգային աղետի մասին: Նա մարգարեացավ. «Թուրքը այսօր անկիրը բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կղառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կղառնա... Սեմք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թէ ինչպես է վարվել մեզ հետ թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով և արտասուրով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»:[10]

Գիրքը գրելով երեք՝ «անցյալի, ներկայի և ապագայի չափումներով»՝ հեղինակն առանձնապես արժևորում է ապագան: Առաջին երկու չափումները՝ ներկան և անցյալը, հայտնի են թուրքին: «...մտածում եմ, որ բոլոր գրքերը Դայաստանի ապագայի մասին են. և այն գրքերը, որ գրում է իմ ժամանակակիցն այսօր, և այն գրքերը, որ կգրվեն հազար տարի հետո, իրենց էռթյան ինչ-որ մասնիկով կիհշեցնեն Եջմիածինը իր «երեք չափումներով»»:[11] Սակայն «Օջախը» միայն Դայաստանի ապագայի մասին չէ, այն նաև հայոց արյունոտ էջերի մասին

է, Մեծ Եղեռնի ու այն կազմակերպած չարագործների մասին:

Թուրք կեղծարարները, փորձելով գեր ինչ-որ չափով արդարացնել իրենց հանցագործությունը հայության առաջ, գլխիվայր շրջում են պատմությունը. «Պատմության հարցերը ուսումնասիրվում և մեկնաբանվում են անսքոր թուրքական նացիոնալիզմի և մարտնչող հակակոմունիզմի դիրքերից»: [12]

Դեռևս 1918 թվականին՝ Բարեւմում Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի բանակցությունների ժամանակ, թուրքական բանակի հրամանատար Վեհիր փաշան անսքոր լկտիությամբ հայտարարել էր, որ հայերը գտնվում են դեպի Արևելք տանող իրենց ճանապարհին. «այնուել է մեր արյունը, մեր կրոնն ու լեզուն: Եվ այդ ծգոտումն ունի իր տարերային ուժը... Մեզ հարկավոր են այդ կողմը տանող ճանապարհները: Դուք հայերդ, կանգնած եք մեր ճանապարհին»:[13]

Դամենատելով գերմանական ֆաշիստներին իրենց ավագ եղբայրների՝ թուրքերի հետ՝ Զորի Բալայանը գրում է. «Այսր գերմանացիները շատ խիստ էին հետևում իրենց ուսուցիչներին, հայերի կոտորածը կազմակերպող և ոգևորող թուրք պարագալուխներին: Չէ՞ որ նոյն բանն էին անում թուրքերը տասնինգ թվականին: Դրա համար էլ չէի զարմանում... Շատ էին նման նրանց ու ֆաշիստների մեթոդները»:[14] Խորհրդային գրաքննության տարիներին հայոց ցեղապանության մասին այսպես բացեիբաց խոսելը վկայում է հեղինակի քաղաքացիական խիզախության մասին՝ ավելի արժնորելով գրքի ճանաչողական և պատմական նշանակությունը:

Պամբակացի վտանգի վերաբերյալ գրողի տագնապը արդիական է նաև մեր օրերում: Թուրքիայի նախաձեռնությամբ թուրքական պետությունների համագործակցություն կառույցը ստեղծելու միտում է նկատվում:

2012 թվականի օգոստոսի 22-ին թուրքական պետություններն ընդունեցին միասնական դրոշ, որը բաղկացած էր Ղողզստամի, Արդրեջամի, Թուրքիայի, Ղազախստամի դրոշների տարրերից: «Միասին մենք կարող ենք հասնել մեծ հաջողությունների», -Քիշքեկում կայացած մամլո ասուլիսի ժամանակ հատարարել էր Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավուդօղլուն:

Դայ ժողովրդի մյուս կարևոր նվաճումը գաղափարական ստրկությունից ազատագրումն էր:

Երկարատև դեգերումներից հետո «Մենք ձեռք բերեցինք (կրկին ձեռք բերեցինք) հպարտություն: Սպանեցինք մեր մեջ Եղած ստրուկին: Նվաճեցինք մեծագույն հաղթանակը, որն արտահայտվում է վաղվա օրվան վստահելու զգացումով»:[15] Այս տողերը գրվել են դեռևս 1981-ին: Գրողն իրավացի էր: Սակայն դրա համար ժամանակ էր պետք. Մովսեսից պահանջվեց քառասուն տարի իր ժողովրդին հոգևոր գերության կապանքների ազատագրելու համար: Խորհրդային իշխանության յոթանասուն տարիները գաղափարական ստրկությունից ձերքագատվելու յուրօրինակ շրջան դարձան: Սերմարափոխությունն ունեցավ իր դերը, և թուրքերի վայրագությունները չտեսած, բայց այդ մասին լավատեղյակ սերունդը հավատաց իր հաղթանակին Արցախյան ազատամարտի օրերին, կրկին սպանեց իր մեջ բուն դրած ստրուկին՝ գենքը ձեռքին պաշտպանելով հայրենի հողը օսուր զավթիչից:

«Օջախը» առաջին գիրքն էր, որ մեծ մասշտաբով ներկայացրեց խնդիրը՝ իր

նախապատմությամբ, իր ակունքներով, ժողովուրդների բարեկամությամ, կեղծ ինտերնացիոնալիզմի փաստերով։ Զորի Բալայանը «Օջախում» անդրադառնում է նաև խորհրդային Յայաստանում գտնվող ճարտարապետական հին կառույցների անմիտիքար վիճակին, հնագույն հայկական բնակավայրերին, որոնք արդեն չկան, իսկ «Երկու-Երեք տասնամյակ առաջ դեռևս կային քարտեզի վրա» և անհետացել են ոչ թե թուրքերի ավերածությունների, այլ խորհրդային խաղաղ իշխանության տարիներին։

Ծրջելով խորհրդային Յայաստանի տարրեր շրջաններում՝ Զորի Բալայանը գրքում ուղևագծում է ոչ միայն հայկական օջախի պատկերը։ Յեղինակին մուահեգում են նաև Յայաստանի էկոլոգիական խնդիրները։ Առանձնահատուկ ջերմությամբ ու գորովով է նկարագրում Արփա-Սևան քունելի շինարարությունը։ Նրա կարուցման մեջ տեսնելով Սևանա լճի փրկությունը։ Նա ապրում է իր հայրենիքով, նրա մարդկանցով։ Երկրի յուրաքանչյուր շրջանում նա գրի է առել այդ շրջանի նշանավոր զավակների մասին։ ԽՄԴՄ հերոսներ, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, անպարզ մարդիկ, որոնք անմնացորդ նվիրված են իրենց հողին։ Ֆիշտ է, «Օջախը» տպագրվեց Արցախյան շարժումից գոեթե մեկ տասնամյակ առաջ, սակայն այս գիրքը կարող ենք անվերապահորեն դասել այն ստեղծագործությունների շարքը, որոնք սերտորեն առնչվում են Շարժման թեմային։ Յայտնի ծշմարտություն է՝ ոչինչ միանգամից չի սկսվում։ այն ումենում է համապատասխան ենթահող, որի հիման վրա ծևավորվում է գաղափարը։ Իսկ այդ գաղափարը արդեն խմորվում էր, որ պիտի դառնար հրապարակախոսի հետագա գործունեության հիմնական ոլորտը։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բալայան Զորի, Օջախ, Եր., 1981, էջ 14:
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում, էջ 5:
4. Սարինյան Սերգեյ, Շարունակվող լեգենդ, Եր., 2008, էջ 44
5. Բալայան Զորի, Օջախ, էջ 519:
6. Նույն տեղում էջ 20:
7. Բալայան Զորի, Յայկաշեն, Եր., 1990, էջ 3:
8. Բալայան Զորի, Օջախ, էջ 285:
9. Նույն տեղում, էջ 25:
10. Րաֆֆի, Եժ, հ.9, 1964, էջ 271-272:
11. Բալայան Զորի, Օջախ, էջ 460-461:
12. Նույն տեղում էջ 420:
13. Նույն տեղում էջ 12:
14. Նույն տեղում, էջ 247:
15. Նույն տեղում, էջ 10:

## **РЕЗЮМЕ**

### **Идеологическая основа произведения “Очаг” Зория Балаяна и связь с арцахским движением Марине Мкртчян**

Несмотря на то, что произведение “Очаг” (дом чьего-то отца) (1981) Зорием Балаяном было написано около 10 лет до начала Арцахского движения, оно может считаться посвященным этой теме. В книге говорится о стране, основанной “Советским чудом” в период расцвета Советской Армении. Автор рассказывает о Карабахе и Нахичевани. Впервые затрагивается тема опасности пантюркизма.

## **SUMMARY**

### **Zori Balayan’s “Hearth” and Ties with the Artsakh Movement Marine Mkrtchyan**

Though Zori Balayan’s “Hearth” (the house of one’s father) (1981) was written about 10 years before the Artsakh movement, it can be considered as one of his works dedicated to the Artsakh theme. The book is about the country established by the “Soviet miracles” about the renaissance of the Soviet Armenia. The author also tells about Karabakh and Nakhijevan. For the first time the issue of danger of pan turkism is being touched upon.